ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/71/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի փետրվարի 21-ին քննելով Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/71/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, իրականացրել է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի «Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ նաև՝

Հայտարարագիր) ներկայացված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալ առերևույթ իրավախախտումը՝

Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում չի հայտարարագրել իր կնոջ՝ Մերի Մարգարյանի մասնակցությամբ «Մավշին» ՍՊ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագրի վերաբերյալ տվյալը:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 5-ին Մխիթար Մաթևոսյանին հասցեագրել է թիվ 01/506-2025 գրությունը՝ հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Մխիթար Մաթևոսյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 13-ին (հիմք՝ AL0126549913AM հետադարձ հանձման ծանուցագիր):

1.3 2025 թվականի փետրվարի 18-ին պատշաճ ծանուցված Մխիթար Մաթևոսյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 32/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Մխիթար Մաթևոսյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 20-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Մխիթար Մաթևոսյանը դիրքորոշում չի ներկայացրել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/71/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն՝ Մխիթար Կոլյայի Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ից մինչ օրս հանդիսանում է Վայք համայնքի ղեկավար (https://www.vayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=936333ce-9cf3-4a8e-a0ab-eeda437785ef):

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների շտեմարանի համաձայն՝ Մերի Մեխակի Մարգարյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձի կինը:

3.4 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ 2022 թվականի փետրվարի 16-ից «Մավշին» ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Մերի Մեխակի Մարգարյանը:

3.5 Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում տվյալներ չեն ներկայացվել Մերի Մարգարյանի մասնակցությամբ «Մավշին» ՍՊ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև կնքված թիվ ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 կապալային աշխատանքների կատարման պայմանագրի վերաբերյալ: Գործի քննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների, մասնավորապես՝ Արմեպս համակարգում տեղադրված պայմանագրի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նշված պայմանագիրը կնքվել է **2022 թվականի օգոստոսի 31-ին:**

3.6 **2023 թվականի ապրիլի 7-ին** «Մավշին» ՍՊ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև կնքվել է թիվ ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 կապալային աշխատանքների կատարման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 6-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը» բաժնում նշվում են **այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը):** Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են **տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կնքված պայմանագրերը**:

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների

վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարույթի հարուցման փուլում և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ հիմք են ընդունվել armeps.am կայքի փնտրման համակարգի սկզբնական՝ «պայմանագրեր» բաժնում արտացոլված այն փաստական տվյալները, համաձայն որոնց՝ «Մավշին» ՍՊ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև 2023 թվականի ապրիլի 7-ին կնքվել է պայմանագիր, որի արժեքը կազմել է 53,463,890 ՀՀ դրամ, մինչդեռ գործի քննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների, մասնավորապես՝ յուրաքանչյուր պայմանագրի ձեռքբերման և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Մերի Մարգարյանի մասնակցությամբ «Մավշին» ՍՊ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև 53,463,890 ՀՀ դրամի կապալային աշխատանքների կատարման մասին թիվ ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 պայմանագիրը կնքվել է **2022 թվականի օգոստոսի 31-ին**, իսկ 2023 թվականի ապրիլի 7-ին, կողմերը կնքել են վերոնշյալ պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը, որով ընդամենը հաստատվել է 2022 թվականին կնքված հիմնական պայմանագրի հիման վրա 2023 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը:

Սույն վարույթի ընթացքում հաստատված փաստական տվյալների և դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր տարեկան հայտարարագրի շահերի հայտարարագրման բաժնում պետք է ներառվեն վերջինիս և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված, 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը գերազանցող այն պայմանագրերը, որոնք կնքվել են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ չնայած վարույթի հարուցման փուլում և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ արձանագրված առերևույթ իրավախախտման փաստին՝ վարույթի իրականացման ընթացքում Հանձնաժողովի կողմից ձեռք են բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք հաստատում են իրավախախտման դեպքի բացակայության փաստը, մասնավորապես, Մխիթար Մաթևոսյանը չի ունեցել թիվ ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 պայմանագրի վերաբերյալ տվյալը հայտարարագրելու պարտականություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նշված պայմանագիրը կնքվել է 2023 թվականին նախորդող ժամանակահատվածում:

Ինչ վերաբերում է Արմեպս համակարգի նախնական ուսումնասիրությամբ հայտնաբերված այն տվյալին, որի համաձայն «Մավշին» ՍՊ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև պայմանագիրը կնքվել է 2023 թվականին, ապա հարկ է նշել, որ նշված տվյալի հիմքով պայմանագրի ձեռքբերման արդյունքում պարզ է դարձել, որ նշված փաստաթուղթը հանդիսանում է 2022 թվականին կնքված հիմնական պայմանագրի թիվ 3 համաձայնագիրը, որով ընդամենը հաստատվել է 2023 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը և ինչը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով չի հանդիսանում հայտարարագրման ենթակա տվյալ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի փետրվարի 5-ին հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՎԻՎ/71/2025 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մխիթար Կոլյայի Մխիթարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ